

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ,
ՆՈՐՈԳՎՈՂ) ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԷՆԵՐԳԱԽՆԱ--
ՑՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ
ՈՒՂՂՎԱԾ

1. Սույն հավելվածով սահմանվում են պետական միջոցների (Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, բյուջետային վարկեր և փոխատվություններ) հաշվին կառուցվող, վերակառուցվող և հիմնական նորոգվող (բացառությամբ մասնակի վերանորոգվող) կրթության, մշակութային, մարզական, առողջապահական, սոցիալական, վարչական և հասարակական նշանակության այլ օբյեկտներում (այսուհետ՝ օբյեկտներ) կիրառման ենթակա էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

2. Օբյեկտների ջերմային և էլեկտրական էներգիայի սպառման ծավալները նվազեցնելու, դրանց շահագործման ծախսերը կրճատելու և նորմատիվային հարմարավետության պայմաններն ապահովելու նպատակով ենթակա են կիրառման էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) պատող կոնստրուկցիաների՝ արտաքին պատերի, նախամուտքերի, տանիքների, նկուղիների ջերմամեկուսացում.

2) պատող կոնստրուկցիաների հնարավոր նվազագույն մակերեսներ ապահովող ծավալահատակագծային լուծումների կիրառում.

3) պատերի արտաքին մակերևույթների պաշտպանությունն ապահովող երեսապատման, սվաղի, ջրակայուն և ջերմակայուն խառնուրդներով ներկերի կիրառում.

4) էներգասարդյունավետ պատուհանների և մուտքի դռների կիրառում.

5) բացվածքների, արտաքին պատերի և ծածկերի տարրերի կցորդումների քվացում.

6) սերտիֆիկացված ջերմամեկուսիչ շինարարական նյութերի օգտագործում.

7) էներգախնայող ջեռուցման, օդավոխության, օդի լավորակման, տաք ջրամատակարարման և լուսավորության համակարգերի ու սարքավորումների կիրառում.

8) ծախսասարդյունավետությունը հիմնավորելու դեպքում այլընտրանքային էներգետիկ համակարգերի՝ արեգակնային ջրատաքացման և ֆոտովոլտային սարքավորումների ու ջերմային պոմպերի կիրառում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ